Ներառական կրթության խնդիրները COVID-19 սահմանափակումների համատեքստում

Ռիմա Պետրոսյան

Անոտացիա

«Ներառական կրթության խնդիրները COVID-19 սահմանափակումների համատեքստում» հետազոտության նպատակն է պարզել, թե կրթությունից դուրս մնացած երեխաների կրթության իրավունքի իրացման վրա ինչպիսի ազդեցություն է ունեցել արտակարգ դրությունը և առցանց եղանակով դրա կազմակերպումը։

Հետազոտության տվյալների հրապարակման ժամանակ պահպանվել է անձի գաղտնիությունը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անոտացիա 2
Ներածություն 4
Հետազոտության նպատակ և խնդիրներ 5
COVID-19 սահմանափակումների միջազգային և տեղական փորձը 6
Հետազոտության մեթոդաբանություն 8
Հետազոտության արդյունքների քանակական վերլուծություն 10
Հետազոտության արդյունքների որակական վերլուծություն 20
Եզրակացություն և առաջարկություններ 26
Հավելված 1 27
Հավելված 2 31
Աբստրակտ 32
Abstract 32

Ներածություն

2020 թվականին COVID-19 համաճարակն առաջացրեց կյանքի բնականոն ընթացքի խաթարում, ինչին անմասն չմնաց նաև կրթական ոլորտը. այն ազդեցություն ունեցավգրեթե 1,6 միլիարդ սովորողների կրթական իրավունքի իրացման վրա՝ աշխարհի 190երկրներում և բոլոր մայրցամաքներում։

COVID-19-ի ժամանակ դպրոցների և ուսումնական այլ հաստատությունների համատարած փակումն աշխարհում ազդեց ուսումնառություն ստացող բնակչության 94%-ի վրա, իսկ ավելի ցածր և/կամ միջինից ցածր եկամուտ ունեցող երկրներում այդ ազդեցությունը հասավ մինչև 99%-ի։

Այս ճգնաժամը նախկինում խոցելի խմբեր համարվող աղքատ բնակավայրերի բնակիչների, փախստականների, հաշմանդամություն ունեցող անձանց վրա էլ ավելի խորքային ազդեցություն ունեցավ[1]։

2020 թվականի մարտի 13-ից Հայաստանում պետական մակարդակով հայտարարվեցարտակարգ դրություն, կրթական ոլորտը անցում կատարեց առցանց ուսուցման համակարգի։ Հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանում կրթության և աղքատության միջև ուղիղ կապ կա և ոչ միայն սոցիալական դրությամբ պայմանավորված, այլև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների (ԿԱՊԿՈՒ) հանրակրթությունից դուրս մնալու հավանականության մեծացումից ելնելով՝ անհրաժեշտություն առաջացավ բացահայտել և վեր հանել Արտակարգ իրավիճակի (ԱԻ) խնդիրները և հասկանալ, արդյոք ԿԱՊԿՈՒ երեխաների իրավունքի վրա ինչպիսի ուղղակի և ոչ ուղղակի ազդեցություն է եղել։

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ, Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանում 2021 թվականի հունիսից հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում։Այն իրականացվել է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի աջակցությամբ և ֆինանսավորմամբ։

---

[1] Միավորված Ազգերի Կազմակերպություն, 2020. *Համառոտ քաղաքականություն: Կրթությունը COVID-19-ի ժամանակ և դրանից հետո:*

https://bit.ly/35Omsbg

Հետազոտության նպատակ և խնդիրներ

Հետազոտության նպատակն է COVID-19 համավարակի սահմանափակումների համատեքստում ԿԱՊԿՈՒ երեխաների հեռավար կրթությանառաջացրած խնդիրների բացահայտումը և կատարված միջոցառումների հետազոտումը:

Հետազոտության խնդիրներն են ՝

1) Պարզել հանրակրթական դպրոցներում ԿԱՊԿՈՒ աշակերտներիընդգրկվածության չափանիշը:
2) Պարզել հանրակրթական դպրոցներում ԿԱՊԿՈՒ աշակերտներիընդգրկվածության չափանիշն արտակարգ դրության պայմաններում:
3) Պարզել արտակարգ դրության պայմաններում գնահատման և աջակցման գործընթացում այն մասնագետներիներգրավվածությունը, որոնց աշխատանքը հեռավար ձևով հնարավոր չի եղել կազմակերպել:
4) Քանակական և որակական պատասխանների արդյունքների հիմանվրա նշել առաջարկությունների փաթեթ, որն ուղղված կլինի կրթական գործընթացին ԿԱՊԿՈՒ երեխաների ներգրավմանը, այլընտրանքային ճանապարհ:

COVID-19 սահմանափակումների միջազգային և տեղական փորձը

Կորոնավիրուսային հիվանդության ներկայիս իրավիճակը (COVID-19) խաթարել է կյանքն աշխարհի յուրաքանչյուր անկյունում և, ամենայն հավանականությամբ, անհամաչափորեն կանդրադառնա նախկինում առկա խոցելիություն ունեցող երեխաների վրա: Հաշմանդամություն ունեցող երեխաներիաշխատանքի ծանրաբեռնվածությունը նշանակում է, որ լրացուցիչ ջանքեր կպահանջվեն՝ համաճարակի տարբեր փուլերն անցնելիս նրանց կարիքները բավարարելու համար:

Ծրագրային գործողության համար անհրաժեշտ կլինի լուծել այս հատուկ մարտահրավերները, համաճարակի ընթացքում և դրանից հետո՝ տարբերակված նհամապարփակ քաղաքականության հետ միասին:

Որոշակի պայմաններում հաշմանդամություն ունեցող երեխաները ենթարկվում են COVID-19-ով վարակվելու և դրա պատճառով հիմնական հիվանդության ավելի ծանր ընթացք ունենալու ռիսկի: Հաշմանդամություն ունեցող երեխաների համար տնային, հեռավար ուսուցումը պահանջում է ոչ միայն համապատասխան ՏՏռեսուրսների և ինտերնետ կապի, գրքերի և այլ ուսումնական նյութերի հասանելիություն, այլև հատուկ օժանդակ սարքերի կամ հատուկ կրթական ծրագրերի հասանելիություն, որոնք թույլ են տալիս շարունակական տնային կրթություն՝հարմարեցված հատուկ կարիքներին:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող երեխաների վրա կարող են հատկապես ազդել ծառայության ընդհատումները, մեկուսացումը և ախտանիշների հնարավոր սրումը՝ ի պատասխան համաճարակի հետ կապված տեղեկատվության նվարքի: Կարանտինային սահմանափակումները և ընդհանուր բեռը, որ ունենում են ընտանիքները, կարող են նաև հաշմանդամություն ունեցող երեխաներին դնել խտրականության և ընտանեկան բռնության խստացված ռիսկերի տակ: Շատ երկրներում ազգային վիճակագրական գրասենյակները կասեցնում կամճշգրտում են ընթացիկ գործողությունները՝ իրենց աշխատողների, հասարակության առողջությունն ու անվտանգությունը պաշտպանելու համար՝ փորձելով համոզվել, որ նրանք կշարունակեն տվյալներ հավաքել հասարակությունից՝ օգտագործելով այլընտրանքային մեթոդներ, ինչպիսիք են հեռախոսային և ինտերնետային տվյալները: Չնայած նրան, որ այս մեթոդները, հավանաբար, կարևոր տվյալներ են տրամադրելու COVID-19-ի բեռը և ազդեցությունը հետևելու համար, մտավախություններ կան, որ այդ մոտեցումները հաշվի չեն առել հաշմանդամություն ունեցող անձանց:[2]

ՀՀ-ում COVID-19 համաճարակին ընդառաջ՝ սահմանափակումներ մտցվեցին կրթական համակարգում, անցում կատարվեց հեռավար դասավանդման, որի արդյունավետության մասին խոսելը դեռ շատ վաղ է, քանի որ առաջացան տարբեր խնդիրներ, որոնք բացասական ազդեցություն ունեցան հեռավար կրթության հարթ ընթանալու վրա:

Ի տարբերություն հիմնական կրթության՝ սովորողների ընդգրկվածությունը միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում և բարձրագույն կրթական հաստատություններում համեմատաբար ավելի ցածր է, իսկ աղքատների և ոչ աղքատների ընգրկվածության տարբերությունը՝ բավական

---

[2] ՅՈՒՆԻՍԵՖ, 2021. *Սահմանափակ կարողություններով երեխաները և COVID-19-ը:*

https://bit.ly/3rb87gu

նկատելի[3]:

[3] ՀՀ վիճակագրական կոմիտե, 2019. *Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Մաս 3. Հայաստան. ոչ նյութական աղքատությունը*, էջ 155

https://www.armstat.am/file/article/poverty_2019_a_4.pdf

Հետազոտության մեթոդաբանություն

Սպիտակի և տարածաշրջանի գյուղական համայնքներում ԿԱՊԿՈՒերեխաների հեռավար կրթական համակարգում առկա խնդիրներն ուսումնասիրելու և վեր հանելու նպատակով իրականացվել են համալիր քանակական և որակական հետազոտություններ՝ առավել ամբողջական և համապարփակ ինֆորմացիա ձեռք բերելու նպատակով:

Հաշվի առնելով արտակարգ իրավիճակում հարցվողների հասանելիությանխնդիրը՝ մեր առջև դրված նպատակին հասնելու համար ընտրվել են հետևյալ մեթոդները.

1) փաստաթղթերի վերլուծություն,
2) ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների հետ հարցումների իրականացում,
3) առանցքային-խորքային հարցազրույցներ բազմամասնագիտական թիմի անդամներիհետ,
4) ֆոկուս խմբային հանդիպումներ՝ ծնողների և մանկավարժների մասնակցությամբ:

Հետազոտության ընտրանք

Իրականացվել են՝

1) փաստաթղթերի վերլուծություն (ուսումնասիրելու նպատակով միջազգային ևտեղական փորձը, պետական և ոչ պետական կառույցներից կատարված աշխատանքների մասին ստացված տեղեկությունների ուսումնասիրություն),
2) քանակական հարցազրույցներ ծնողների հետ (պարզելու նպատակով ծնողների վերաբերմունքը հեռավար անցկացվող դասերի վերաբերյալ ևծանոթանալու կրթության իրավիճակին ԱԻ պայմաններում, դրա արդյունավետությունը),
3) որակական առանցքային հարցազրույցներ բազմամասնագիտական (հոգեբան,լոգոպեդ, սոցմանկավարժ, ուսուցչի օգնական և այլ հատուկ կարիքով երեխաների հետ աշխատող մասնագետներ) թիմի անդամների հետ (պարզելունպատակով ինչպիսի խնդիրների են բախվել հեռավար աշխատանքներում, ինչպես են իրականացրել ուսումնական աշխատանքներն այդ պայմաններում),
4) որակական ֆոկուս խմբային հանդիպումներ ծնողների և ոլորտի աշխատողմասնագետների հետ (պարզելու նպատակով հեռավար կրթության խնդիրները, կատարած աշխատանքները, միմյանց հետ համագործակցությունը, լսելու առաջարկություններ):

Քանակական հարցազրույցներն իրականացվել են Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնից, Լոռու մարզպետարանից, ՀԿ-ներից ստացված տվյալների բազայի տեղեկատվության համապատասխան՝ ըստ որի Սպիտակի տարածաշրջանում հունիս ամսվա ընթացքում կա 122 ԿԱՊԿՈՒ երեխա: Դպրոցներ այցերի, տնօրենների հետ առանձնազրույցների միջոցով պարզել ենք COVID-19-ի ժամանակ ներառված և ուսումնառության մեջ գտնվող երեխաների ծնողների տվյալները և հարցազրույցներ անցկացրել նրանց հետ: Եղել են ծնողներ են, որոնք հրաժարվել են մասնակցել հարցազրույցին:

Հաջողվել է հարցազրույցներ իրականացնել 62 ծնողների շրջանում: Չնայած 2020 թվականին կային ներառված երեխաներ, որոնք 2021 թվականին արդեն շրջանավարտներ էին կամ վերագնահատման արդյունքում այլևս ներառված չէին՝ մարզպետարանից ստացած բազայի մեջ կային նաև աշակերտներ, որոնք ներառվել էին 2021 թվականին: Հարցազրույցի անձանց ընտրությունը կատարվել է այն սկզբունքով,որհարցազրույցին մասնակցեն այն ծնողները, որոնց

միջոցով կդիտարկվի թեթև, միջին,ծանր, խորը խնդիրներ ունեցող երեխաների կրթության իրականացումը։

Հարցազրույցներն իրականացվել են հեռավար եղանակով։ Վերլուծությունն իրականացվել է ըստ հարցման՝ ստացված պատասխանների քանակի, որը ներկայացվել է տոկոսային հարաբերակցությամբ և ըստ մեկնաբանությունների։

Հետազոտության արդյունքների քանակական վերլուծություն

Հետազոտության քանակական հարցումներն իրականացվել են ՀՀ, Լոռու մարզի, Սպիտակի տարածաշրջանի 19 համայնքների շրջանում:

■ *Սպիտակի տարածաշրջան*

Ըստ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնից, Լոռու մարզպետարանից, ՀԿ-ներից ստացված տեղեկատվության՝ նույն մարզի 18 համայնքներում սովորում է թվով 122 ԿԱՊԿՈՒ երեխա, որոնց ծնողների 75.64%-ի (n=122) շրջանում հնարավոր է եղել անցկացնել քանակական հարցազրույցներ՝ հարցաթերթիկների միջոցով:

Երեխաների սեռը

Հարցազրույցին մասնակցած ծնողների երեխաների 38,7%-ը (n=62) եղել են իգական սեռի

ներկայացուցիչեր։

Հարցազրույցին մասնակցած ծնողների երեխաների 58,06%-ը (n=62) եղել են արական սեռի ներկայացուցիչներ։

Հարցազրույցին մասնակցած ծնողների 3,22%-ը (n=62) հրաժարվել է նշել երեխայի սեռը։

Հարցումներ իրականացված համայնքներ

Հարցումներն իրականացվել են Սպիտակ, Շիրակամուտ, Սարահարթ, Կաթնաջուր, Արևաշող, Լեռնանցք, Լեռնապատ, Ջրաշեն, Գոգարան, Հարթագյուղ, Լուսաղբյուր, Մեծ Պարնի համայնքներում: Այն համայնքներում, որտեղ հարցումներ չեն իրականացվել, դրանցում ներառված երեխաներ չեն եղել կամ ծնողները հրաժարվել են մասնակցել հարցազրույցին։

Երեխաների ֆունկցիոնալ գնահատում

Երեխաների ֆունկցիոնալ գնահատումն ըստ հարցումների ունի հետևյալ դասակարգումը, որից տեսականորեն կարելի է եզրակացնել, որ հեռավար աշխատանքում դժվարություններն անխուսափելի էին լինելու։

Խոսքային, լսողական խանգարումներ	Աուտիզմ	Հենաշարժողական խնդիրներ	Տեսողական խնդիրներ	Մտավոր խնդիրներ	Վարքային խնդիրներ	Երեխայի խնդրի չիմացություն
24,19% (n=62)	3,1% (n=62)	4,83% (n=62)	4,83% (n=62)	17,7% (n=62)	9,6% (n=62)	24,19% (n=62)

Տեղյակ եք արդյոք Արտակարգ իրավիճակի պայմաններում կրթության կազմակերպման եղանակներից

Այստեղ պարզել ենք, որ հարցվողների միայն 52,5 տոկոսն է տեղյակ ԱԻ պայմաններում կրթության կազմակերպման եղանակներից, իսկ 47,5 տոկոսը տեղյակ չէ և հեռավար կրթության մասին տեղեկություններ չունի։



Երեխայի մասնակցության ցուցանիշը հեռավար եղանակով անցկացվող դասերին

Այստեղ պարզել ենք, որ հարցվողների երեխաների կեսից ավելին մասնակցել է հեռավար դասընթացներին։



Երեխաներին աջակցություն տրամադրելու ժամանակահատվածներ

Ստորև ներկայացվում է մասնագիտական աջակցությունների տրամադրման ժամանակահատվածը, ըստ որի՝ դասերի ընթացքում տրամադրվել է աջակցություն, որից ենթադրվում է, որ երեխան դասապրոցեսի ընթացքից դուրս է եկել՝ անհատական աջակցություն ստանալու նպատակով։

Դասերից հետո քիչ քանակի երեխաների է տրամադրվել աջակցություն, և մեծամասնությունը կանոնակարգված աջակցություն չի ստացել։

1	Դասերի ընթացքում	4,34% (n=62)
2	Դասերից հետո	11,29% (n=62)
3	Չի տրամադրվել	74% (n=62)
4	1-ը և 2-ը միասին	8% (n=62)

Աջակցության տրամադրման ժամեր

Աջակցության 24,19%-ը (n=62) տրամադրվել է 11:00-16:00 ընկած ժամանակահատվածում, որը ներառում է և՛ դասապրոցեսի ընթացքը, և՛ դասերից հետոյի շատ քիչ ընթացքը։

65,74%-ին (n=62) աջակցություն չի տրամադրվել. պատճառները կներկայացնենք լրացուցիչ ստորև։

Աջակցության 10.7%-ն իրականացվել է տեսանկարահանումների միջոցով։ Ծնողների խորհրդատվությունների միջոցով՝ մասնագետի հանձնարարությունը կատարելիս տեսանկարահանել և ուղարկել են վերջինիս։

Արդյոք մասնագետի աշխատանքի իրականացման ժամանակը համաձայնեցվել է այն ծնողների հետ, որոնց երեխաները ստացել են մասնագիտական աջակցություն:

Այստեղ պարզել ենք՝ մասնագետները հարցվողների գրեթե 75%-ի (n=62) հետ չեն քննարկել երեխայի աջակցման ժամանակահատվածը՝ ավելի նպատակահարմար ժամերի միանալու համար, որպեսզի ընտանիքի մյուս անդամները չխանգարեն երեխային կամ դասապրոցեսին:



Մասնագետները կատարե՞լ են երեխաների հետ աշխատանք, թե՞ ոչ:

Այստեղ տեսնում ենք, որ չնայած հեռավար կատարած զանգերին՝ բուն աջակցություն չի իրականացվել երեխաների մեծամասնության մոտ:



Կատարած աշխատանքների վերաբերյալ ծնողների գոհունակության մակարդակ

Այստեղ պարզել ենք, որ ծնողների դժգոհությունները շատ են՝ կապված մասնագետների կատարած աշխատանքի անցկացման ձևի, բովանդակության հետ։



Մասնագետների կատարած աշխատանքի բնույթի էությունը՝ ըստ կետերի

Ներկայացվել են այն մասնագետների աշխատանքների բնույթը, որոնք իրականացրել են հեռավար աշխատանք.

1) մտավոր ոլորտի զարգացմանն ուղղված աշխատանքներ,
2) դասերից հետո բաց թողնված նյութի լրացում,
3) խնդրի շտկողական աշխատանքներ,
4) խնդրի կանխարգելման և շտկողական աշխատանքներ,
5) ծնողների համար խորհրդատվություն։

Ստորև ներկայացվում է ծնողների դժգոհությունների մեկնաբանությունները՝ մեջբերումներով.

Երեխային աջակցող թիմը ոչ կոմպետենտ է եղել, վստահություն չկա նրանց նկատմամբ։

Համակարգիչ, հեռախոս, ինտերնետ կապ չունենալու պատճառով երեխան չի մասնակցել հեռավար անցկացվող դասընթացներին։

Հեռավար դասընթացներ չեն կազմակերպվել կամ այդ մասին մեզ չեն տեղեկացրել։

Երեխան համակարգչի առջև երկար չի կարող նստել, հոգնում է, գլխացավեր է ունենում։

Երեխայի խնդիրն անհամատեղելի է եղել հեռավար մասնակցության հետ, խորհրդատվություն են տրամադրել ինձ՝ երեխայիս հետ աշխատելու հարմար։

Հեռավար ուսուցման ընթացքում առավել հաճախ հանդիպող խնդիրները՝ ըստ դասակարգման

Հեռավարի ընթացքում մասնագետներն աշխատել են՝ երեխաների հետ հետևյալխնդիրների լուծմանը հասնելու նպատակով.

1) դրական տեղաշարժի բացակայություն,
2) տեղեկատվության ընկալման հետ կապված խնդիրներ,
3) մասնագետի աջակցության անցկացման ձևի և բովանդակության հետ կապված խնդիրներ,
4) ուսումնական ժամանակի ծանրաբեռնվածության հետ կապված խնդիրներ։

Ներկայացնում ենք երեխաների հետ աշխատած մասնագետների ցանկ, ինչպես նաև ծնողների գնահատականը նրանց կատարած աշխատանքներին։

Ինչպես վերը նշված տեղեկություններում տեսնում ենք, բավականին քիչ քանակի մասնագետներ են աշխատանք իրականացրել։ Չաշխատելու պատճառները տարբեր են և այստեղ պետք է նշել, որ ծնողների որոշակի մասը հրաժարվել է պատասխանել այս հարցին, եղել է նաև չիմացություն, թե ինչ մասնագետներ են աշխատել։

Մասնագետ	Հոգեբան	Հատուկ մանկավարժ	Լոգոպեդ	Ուսուցչի օգնական	Սոցմանկավարժ	Ֆիզիոթերապևտ
Գնահատումներ մինչև 5 բալանոց համակարգով	4					5
			3			
	5					
	5	5				
	5					
	4					
	5			5		
	3					
	2		2	0	4	
	5					
	5					
	5	5				

	5		5	5		
	5		5		5	
	5			5		

ՏՄԱԿ- կազմակերպած աշխատանքների գոհունակություն

Ստորև ներկայացվում է, թե ինչ չափով են ծնողները գոհ տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի կազմակերպած աշխատանքներից. գերակշռում են բացասական պատասխանները։



Դպրոցի կազմակերպած աշխատանքների նկատմամբ գոհունակություն

Դպրոցի կատարած աշխատանքները կարող էին և կազմակերպվել ավելի արդյունավետ, սակայն նույնիսկ դպրոցի տնօրենի հետ կապված խնդիր շեշտվեց, որը դեմ է ոչ միայն ներառված երեխայի հեռավարի մասնակցությանը, այլև դեմ է վերջինիս դպրոց գնալուն: Կարճ ասած, դպրոցը ևս թերացել է կազմակերպման աշխատանքներում:



Ծնողներ, որոնք կատարել են աշխատանքներ՝ երեխաների հետ խնդիրը չխորացնելու կամ ավելի բարելավելու նպատակով:

Այստեղ տեսնում ենք, որ հարցվողների ուղիղ կեսն ասել է, որ աշխատել են, իսկ մյուս կեսը չի աշխատել երեխաների հետ:



Այսպիսով, քանակական հարցազրույցների արդյունքում պարզեցինք, որ հեռավար եղանակով կազմակերպված աշխատանքներից ոչ բոլորն են ունեցել արդյունավետություն: Պատճառները շատ տարբեր են տեխնիկական խնդիրներից մինչև երեխայի հեռավարին մասնակցելու ցանկություն չունենալը և հեռավարի խնդրի հետ անհամատեղելի լինելը: Քիչ թվով մասնագետներ են անցկացրել հեռավար կայուն աջակցություններ, որի պատկերը երևում է հետազոտության քանակական վերլուծության մեջ: Իսկ զանգելը ծնողին, հետաքրքրվելը երեխայի վիճակով, ինչպես արվել է շատ մասնագետների կողմից, դա դեռ չի համարվում հեռավար կրթություն:

Հետազոտության արդյունքների որակական վերլուծություն

Որակական հարցազրույցների մասնակիցների ընտրանքը որոշվել է՝ հաշվի առնելով մարզպետարանից բանավոր կերպով ձեռք բերված ինֆորմացիան, ՀԿ ներկայացուցիչներից ստացված տեղեկությունները: Փոքր և միջին գյուղական համայնքներում բազմամասնագիտական թիմով դպրոցները հագեցած չեն, բացի ուսուցչի օգնականից: Դա պայմանավորված է աշակերտների քիչ թվաքանակով: Եվ քանի որ ՏՄԱԿ-ը (Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցման և գնահատման կենտրոն) տարբեր համայնքներում աշխատանքներ է տանում երեխաների հետ, 1- ական մասնագետ ընտրվեց ՏՄԱԿ-ից՝ սոցիալական աշխատող, հատուկ մանկավարժ, հոգեբան, լոգոպեդ, և 1-ական մասնագետ ընտրվեց դպրոցներում աշխատող բազմամասնագիտական թիմի ներկայացուցիչներից՝ հոգեբան, ուսուցչի օգնական, լոգոպեդ, սոցիալական աշխատող: Մասնագետների ընտրությունը պայմանավորված էր նրանով, որ ընդգրկվեն թեթև, միջին, խորը, ծանր խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատող մասնագետներ:

Բոլոր մասնագետները եղել են իգական սեռի ներկայացուցիչներ: Առանցքային հարցազրույցներն իրականացվել են դեմառդեմ և հեռավար ձևաչափերով:

Ֆոկուս խմբային հանդիպումները տեղի են ունեցել թվով 3 անգամ՝ դեմ առ դեմ հանդիպումների միջոցով: Հրավիրվել և ներկա են գտնվել Սպիտակի տարածաշրջանի դպրոցի ներկայացուցիչներ (բազմամասնագիտական թիմի անդամներ), ՏՄԱԿ-ից (տնօրեն, մասնագետներ), մանկավարժներ, ծնողներ: Վերը նշված անձինք աշխատել են կամ առնչություն են ունեցել հեռավար կրթության հետ, COVID-19 սահմանափակումների ժամանակ:

Ներկա է եղել թվով 24 մասնակից, որոնցից 2-ը՝ արական սեռի ներկայացուցիչ և 22-ը՝ իգական սեռի ներկայացուցիչ:

Վերը նշված մասնակիցները եղել են Սպիտակից և հարակից գյուղերից:

Վերլուծությունն իրականացվել է ըստ խնդիրների վերհանման՝ պարզելու, թե ինչ չափով և ինչպես է հնարավոր եղել դրանց հաղթահարումը, կիրառված մեթոդների արդյունավետությունը և ստեղծված իրավիճակի մասին առաջարկությունները:

Ստորև ներկայացվում է խորքային հարցազրույցների վերլուծությունը՝ ըստ մասնագետների:

Հարցազրույցների ընթացքում կենտրոնացել ենք հետևյալ հարցերի վրա՝

1) ի՞նչ պայմաններում են կատարվել աշխատանքները և ինչպիսի՞ մեթոդներ են կիրառվել,
2) ի՞նչ խնդիրների են բախվել աշխատանքի ընթացքում մասնագետները,
3) ինչպե՞ս են հաղթահարվել առաջացած խնդիրները,
4) առաջացած խնդիրներից որո՞նք չեն հաղթահարվել, չհաղթահարման պատճառները,
5) ի՞նչ առաջարկներ կան:

Սոցիալական մանկավարժ

Ըստ սոցմանկավարժների՝ հեռավարը լիովին կազմակերպված չէր՝ չնայած դա ԿԱՊԿՈՒ երեխաների հետ (և ոչ միայն) աշխատելու միակ եղանակն էր: Որպես արդյունավետ մեթոդաբանություն՝ նախընտրել են տնային պայմաններում զարգացնել ինքնասպասարկման հմտություններ, որոնք տեսանկարահանման միջոցով ուղարկվել է մասնագետին, ցուցումներ են տրվել կատարել գործողություններ, ձևավորել ինքնուրույն հաց ուտելու, լվացվելու, քայլելու

հմտություններ։ Վերջիններս գնահատելով կատարած աշխատանքը՝ վերահրանգավորում են արել։

Հիմնականում խնդրին բախվել են կապի միջոցների բացակայության պատճառով, քանի որ ոչ բոլոր երեխաներն են ունեցել համապատասխան սարքավորումներ։ Բացի այդ, մտավոր կամ վարքային ծանր, խորը խնդիրներ ունեցող երեխաների հետ գրեթե չեն աշխատել՝ ծնողը չի ցանկացել համագործակցել, ռեսուրս չեն ունեցել, երեխայի վարքը հնարավոր չի եղել հեռավար անցկացնելու համար կառավարել։

Ստեղծված իրավիճակից դուրս գալու ելքը եղել է զանգեր անելով (թեթև և միջին խնդրի դեպքում) հեռավար միանալը, օնլայն զարգացնող խաղեր կազմակերպելը։ Ծնողի հետ համագործակցությունը միշտ եղել է խնդրի լուծման մոտեցմանն ուղղված առաջնային սկզբունք։

Հնարավոր չի եղել լրացնել գրեթե կես տարվա բաց թողածը. այն երեխաները, որոնք չեն ունեցել հեռախոս կամ համակարգիչ, մեծ մասին դրանք չեն տրամադրվել, ինտերնետ կապի խնդիրը մնացել է անլուծելի։

Ըստ սոցիալական մանկավարժների՝ հեռավար կրթության ընթացքում անհրաժեշտ էր հավելյալ ուշադրության կենտրոնում պահել ԿԱՊԿՈՒ երեխաների հետ տարվող ուսումնական գործնթացը, ինչը սակայն այդպես չէր և հաշվի չէր առնվում այն փաստը, որ որոշ երեխաներ այդպես էլ չմասնակցեցին հեռավար կրթությանը։

Հոգեբան

Հոգեբանների աշխատանքն իրականացվել է հեռավար եղանակով։ Սկզբնական շրջանում հեռավար պայմաններում աշխատելու մեթոդներ չունենալու պատճառով դժվարություններ շատ են եղել, մինչև աշխատանքի ընթացքում հարմարվել են նոր իրադրությանը, սովորել են մեթոդներ մշակել ու կիրառել։ Աշխատել են տեսանկարահանման միջոցով, տվել են հանձնարարություններ՝ ուշադրությունը (օրինակ՝ փազլ հավաքել), հիշողությունը (օրինակ՝ պատկերները վերադասավորել), մտածողությունը (թեթևի դեպքում՝ պարզ տրամաբանական խնդիրներ լուծել) կենտրոնացնող մեթոդներ և վարժություններ, այնուհետև դրանք ծնողը ուղարկել է հոգեբանին, վերջինս լրացուցիչ հրահանգներ է տվել հաջորդ տեսանկարահանման համար։ Հետագայում, մասնագետի հետ zoom հեռավար տարբերակով, համակարգչային խաղերի միջոցով են նաև նույն գործողություններն արվել։

Խնդիրները որպես այդպիսին սկզբնական շրջանում եղել են ռեսուրսային խնդիր՝ համակարգչի, ինտերնետ կապի բացակայություն։ Հետո երբ ինչ-որ չափով դա լուծվել է, առաջացել են համակարգչի առջև երեխայի երկար նստելու, տանն առանձին սենյակ չունենալու հետ կապված խնդիրներ. դեպքեր են եղել նաև, երբ համակարգչով աշխատելը երեխայի ֆունկցիոնալ վիճակի հետ անհամատեղելի է եղել։

Վերը նշված խնդիրները հաղթահարվել են՝ ռեսուրսներ տրամադրելով և ծնողների հետ խորհրդատվություն անցկացնելով։

Անհաղթահարելի են եղել և բաց են թողնվել այն երեխաների հետ աշխատանքը, ում խնդիրը եղել է խորը կամ ծանր (վերջիններիս հետ աշխատանքը հնարավոր չի եղել կազմակերպել), ինչպես նաև այն երեխաների հետ աշխատանքը, ում մոտ այդպես էլ չի լուծվել համակարգչի կամ կապի խնդիրը։

Ուսուցչի օգնական

Ուսուցչի օգնականները երեխաների հետ անցկացվող կրթությունը կազմակերպել են հեռավար եղանակով։ Օնլայն դասերին միացել են հատուկ պայմանների կարիք ունեցող այն երեխաները,

որոնք չեն հասցրել դասերի ընթացքում կատարել ուսուցիչների հանձնարարությունները. օնլայն դասի ավարտին լրացուցիչ աշխատանքներ են տարվել նրանց հետ։ Կիրառվել է դիտման մեթոդ, այնուհետև դրա արդյունքներին համապատասխան կազմակերպվել են աշխատանքներ՝ հանձնարարվել են տեքստեր կարդալ, գրավոր հանձնարարություններ կատարել, հետո նկարել և ուղարկել են մասնագետին։

Խնդիրները որպես այդպիսին սկզբնական շրջանում ավելի բարդ էին՝ տեխնիկա չունենալը, երեխաների դժվար ընդգրկվածությունը, հետո արդեն դասապրոցեսից հետ մնալը, ինչի հետևանքով կանգնել են բացը լրացնելու խնդրի առաջ։

Այդ խնդիրները փորձել են հաղթահարել հավելյալ ժամանակ տրամադրելով, սակայն այս դեպքում էլ, ուսուցչի օգնականների մեկնաբանմամբ, բախվել են ֆիզիկապես և մտավոր հոգնած երեխայի հետ փաստացի աշխատելու խնդրի հետ։

Ըստ ուսուցչի օգնականի՝ այն երեխաները, որոնք այդպես էլ հնարավորություն չեն ունեցել հեռավար միանալ, զրկվել են կրթության իրենց իրավունքից։

Ուսուցչի օգնականներն առաջարկում են, որ այս ձախողված հեռավար ուսուցումը վերանայվի՝ բաց թողնված խնդիրները լուծելու նպատակով և/կամ հրաժարվեն անարդյունավետ մոտեցումներից։

Լոգոպեդ

COVID-19-ի սահմանափակումների ժամանակ լոգոպեդները երեխաների հետ աշխատանքները սկսել են իրականացնել հեռավար, սակայն այն ժամանակահատվածից սկսած, երբ արդեն փորձել են կիրառել տեխնիկա, ստեղծել հարթակներ և երեխաներին հեռավար կրթելու մեխանիզմներ։ Ռեսուրսներ տրամադրել է նաև դպրոցը։ Հեռավարի ընթացքում մեթոդների ընտրությունը հատուկ ձևով չի իրականացվել, քանի որ այդպիսիք գոյություն չեն ունեցել. փորձ է արվել ամեն կերպ բարելավել կամ չթողնել, որ երեխան հետզարգացում ունենա։ Այն երեխաները, որոնք զուգահեռ ունեցել են և՛ խոսքային, և՛ լսողական խնդիրներ, առավել բարդ է եղել նրանց հետ աշխատելը կամ նրանց հետ աշխատանք չի տարվել, քանի դեռ ծնողը չի միջամտել։

Ըստ լոգոպեդի առանձնացրած խնդիրների՝ ընտանիքում հեռավարի անցկացման գործընթացին շատ են խանգարել բարձր ձայները, քույր-եղբայրների միջամտելը, ոչ անհատական աշխատելը։ Երեխաների մի մասն այդպես էլ չի միացել հեռավարի դասընթացներին։ Այդ իրավիճակներից փորձել են դուրս գալ ծնողների հետ անհատական զրույցներով՝ խնդիրների վերհանմամբ, դրանց հնարավոր լուծմամբ։ Շեշտվում է նաև այն փաստը, որ այդ զրույցների արդյունքում հաջողություններ են ունեցել աշխատանքները բարելավելու հարցում։

Այդպես էլ չեն կարգավորվել այն խնդիրները, երբ երեխան չի կարողացել կամ չի ցանկացել միանալ, իսկ ծնողը հետաքրքրվածություն չի ցուցաբերել։

Ըստ լոգոպեդի՝ երեխայի խնդրի հարցում անհրաժեշտություն կա բարձրացնել ծնողների դերը։

Հատուկ մանկավարժ

Հատուկ մանկավարժն ասում է, որ կրթությունը կազմակերպվել է հեռավար պայմաններում, սակայն դա դեռ չի նշանակում, որ այն իրականացվել է կամ առավել ևս արդյունավետ է եղել։

Հեռավար եղանակով հատուկ մանկավարժները երբեմն միացել են այն

ժամանակ, երբ հնարավոր է եղել ծնողի հետ համագործակցել. այստեղ վերջիններս մատնանում են, որ զուգահեռ աշխատել են նաև ծնողի հետ, քանի որ ծնողներին տրամադրել են

խորհրդատվություն և մեթոդական հրահանգեր՝ կարդալու, գրելու հմտություններ զարգացնելու նպատակով։

Խնդիրներ շատ են եղել՝ սկզբնական շրջանում տեխնիկական, այնուհետև կազմակերպչական։ Երեխաները չեն միացել տարբեր պատճառներով՝ չեն կարողացել, չեն ցանկացել, ծնողները չեն ներգրավվել, պատրաստակամ չեն եղել լուծել իրավիճակը ։

Փորձ է արվել խնդիրները հաղթահարել՝ պարբերաբար զանգելու, նաև պահանջելու միջոցով, որ ուշադրություն դարձնեն երեխայի կրթությանը, սակայն հասկանալի է, որ տեսականորեն դա բարդ խնդիր է թե՛ մասնագետների, թե՛ ծնողների, թե՛ երեխաների համար։

Վերը նշված խնդիրները չեն հաղթահարվել ոչ ճիշտ կազմակերպման պատճառով։ Օրինակ՝ մի երեխա, որն ունի կենտրոնանալու, մյուսը՝ լսողական, երրորդը՝ բարդ վարքային խնդիր. հասկանալի է, որ այդ երեխաների խնդիրները դժվար են կառավարվում նույնիսկ դեմ առ դեմ շփման արդյունքում, իսկ հեռավարում դա անհնար էր, ինչի հետևանքով COVID-19-ի ժամանակ երեխաները դուրս են մնացել կրթությունից։

Առաջարկություններ՝ ԱԻ պայմանների համար կազմակերպել համընդհանուր մոտեցմամբ ծրագիր և ձախողումների համար պատասխանատու մարդիկ պատասխանատվություն կրեն։

Հետազոտության որակական հարցազրույցների արդյունքում թվով 3 ֆոկուս խմբային հանդիպումներ են եղել ոլորտի մասնագետների և ծնողների մասնակցությամբ։ Խմբային հանդիպումն ընթացել է անհատական առանցքային հարցերի տրամաբանության շրջանակում։

Ֆոկուս խմբային քննարկումների վերլուծություն

Ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ հաստատվեց, որ Արտակարգ իրավիճակի ընթացքում COVID-19 սահմանափակումների պայմաններում, կրթությունը կազմակերպվել է հեռավար եղանակով։ Մասնագետների նշմամբ, ԿԱՊԿՈՒ երեխաների, ինչպես նաև որոշ մանկավարժների շրջանում, սկզբնական շրջանում առաջացել են տեխնիկայի պակասի խնդիր. ոչ բոլորն են ունեցել կայուն ինտերնետ կապի միջոցներ, երկուստեք (աշակերտ-մանկավարժ) բախվել են նաև համակարգչին չտիրապետելու խնդրին։

Ծնողների և մասնագետների կողմից առանձնացված առաջնային խնդիրներն են եղել՝

1) համակարգիչ, հեռախոս, ինտերնետ կապի միջոց չունենալը,
2) կապի և հոսանքի պարբերաբար անջատումները,
3) տնային պայմաններում անհատական աշխատանքի կազմակերպման և անցկացման մեծ դժվարությունները,
4) երեխայի խնդրով պայմանավորված՝ հեռավար անցկացման եղանակի անհամատեղելիությանը (ծանր, խորը խնդիրների դեպքում առավել ևս արտահայտված է եղել),
5) դպրոցների կազմակերպչական թերությունները,
6) ծնողների անլուրջ մոտեցումը խնդրին,
7) երեխաների խնդիրների՝ առաջընթաց չունենալը։

Վերը նշված խնդիրները լուծելու նպատակով իրականացվել են հետևյալ գործողությունները՝ դպրոցներն իրենց համակարգչային սենյակների տեխնիկանտվել են այն երեխաներին, որոնք չեն ունեցել կապի միջոցներ։ Տնօրենների շրջանում եղել են մարդիկ, որոնք լուծել են նաև կապի

խնդիրը՝ մասնավորապես վճարելով ինտերնետ կապի գումարը։ Այս մասով աջակցելու պատրաստակամություն են հայտնել նաև ՀՀ Լոռու մարզպետարանը, Սպիտակի քաղաքապետարանը, ՀԿ կառույցները, սակայն թե ինչ չափով են կարողացել վերջիններս աջակցել, արդյոք հատուկ թիրախ են ընտրվել ԿԱՊԿՈՒ երեխաները, թե ոչ, ունի լրացուցիչ հետազոտության կարիք։

Ոչ միայն դասաժամերին, այլև աջակցության ժամերին երեխաների չմիանալու հիմնական պատճառաբանություններից են եղել կապի և հոսանքի պարբերաբար անջատումները, որի վերահսկողությունն անկառավարելի է ուսուցչի,բազմամասնագիտական թիմի անդամի կողմից։

Ծնողները ևս չէին կարող այդ կրկնվող խնդիրներին լուծում տալ։Մասնագետների գնահատմամբ, տնային պայմաններում կազմակերպվող ուսուցումը՝ այն էլ հեռավար, անարդյունավետ էր՝ մասնավորապես երբ մեծ ընտանիքնապրում էր փոքր տանը, առանձին սենյակ չէին կարող տրամադրել երեխայի դասապրոցեսի համար։ Կապի միջոցը, որով երեխան միանում էր դասին, կարող էր այդ ժամին տանը չլինել, քանի որ երեխաների մեծամասնությունը միանում էին ծնողների հեռախոսներով, իսկ ծնողներ կային, որ աշխատանքի էին կամ տարբեր պատճառներով տանը չէին լինում։

Երեխաների խնդիրը երբեմն համատեղելի չի եղել հեռավար եղանակով ուսուցում տրամադրելուն. ծանր կամ խորը աուտիզմ, լսողական, վարքային, մտավոր խնդիրներունեցող երեխաներին հնարավոր չի եղել երկար ժամանակ պահել համակարգչի առջև՝ անգամ ծնողի միջամտությամբ։ Եղել են ծնողներ, որ ցանկացել են հեռավար միանալ, փորձել են, սակայն տեսնելով անարդյունավետությունը՝ իրենք են հրաժարվել աջակցությունից։

Դպրոցների կողմից բավարար չափով չի կազմակերպվել հեռավար ուսուցումը, ծնողներին չեն զանգահարել և քննարկել երեխաների ուսումնառության խնդիրը լուծելու հնարավոր եղանակները։ Եղել են դեպքեր, երբ պարզապես ասվել է, որ երեխայի հետ հնարավորչէ աշխատել։ Մասնագետը խորքային հարցազրույցներից նաև մի դեպք է նշել, երբ դպրոցի տնօրենն արդեն հեռավարից հետո արգելել է ծնողին ԿԱՊԿՈ երեխային դպրոց բերել, պատճառաբանելով, որ երեխան ունի ծանր աուտիզմ, խանգարում էմյուս երեխաներին։ Խնդրին տրվել է մասնակի կամ ժամանակավոր լուծում։

Դպրոցների կամ ուսուցիչների մեկնաբանմամբ, ծնողների մոտեցումը եղել էանլուրջ, նրանց շարքում եղել են ծնողներ, որոնք անձամբ են հրաժարվել, որ իրենցԿԱՊԿՈՒ երեխայի հետ անցկացվի հեռավար ուսուցում։ Եղել են ծնողներ, որոնք անպատասխանատվություն են ցուցաբերել ոչ միայն կազմակերպված հեռավար ուսուցման, այլև ընդհանրապես ուսումնական ամբողջ գործընթացի նկատմամբ։

Ուսուցիչների և ծողների մեկնաբանմամբ, հեռավար ուսուցումը դժվարությունների առաջ է կանգնեցրել վերջիններիս. երեխաների խնդիրների շտկման նպատակով կատարված աշխատանքները շատ անհավասար են առաջ գնացել։ Որոշների դեպքուն ունեցել են հաջողություններ, որոշների դեպքում ամեն ինչ մնացել է նույնը, մյուսների դեպքում էլ վատթարացում է նկատվել և առաջացել են նոր խնդիրներ սոցիալականացման ոլորտում, համաճարակի հետսթրեսային վիճակներ են դիտարկվել։

Վերը թվարկածները հաղթահարելու փորձ է արվել նախևառաջ ուսուցիչների և ծնողների ակտիվ համագործակցությամբ և այն տրամաբանությամբ, որ կա՛մ ուսուցիչը/մասնագետը կտա մեթոդական ցուցումներ, ծնողը դա կիրականացնի, կա՛մ մասնագետը, որը նախկինում երբևէ չի անցկացրել հեռավար դասեր և չի տիրապետում համապատասխան մեթոդների, կմշակի

մեթոդների նորխմբեր և կաշխատի երեխաների հետ։ Գործնականում դա կատարվել է հետևյալ կերպ՝ մասնագետը հանձնարարել է որոշակի գործողություններ՝ երեխայի որևէ հմտությունը զարգացնելու համար, ծնողը տանը դա կատարել է, տեսանկարահանման միջոցով ուղարկել է մասնագետին։ Մեկ այլ դեպքում մասնագետն է մշակել օնլայն տարբերակով երեխայի իմացական ոլորտները զարգացնող խաղեր և հեռավար կիրառել անձամբ երեխայի հետ։ Եղել են դեպքեր, երբ մասնագետը չի կարողացել աշխատել և/կամ ծնողի հետ համագործակցությունը չի ստացվել։

Այս ամենում անհաղթահարելի են մնացել տեխնիկական խնդիրների լուծումները, հասարակական գիտակցության մոտեցումը ԿԱՊԿՈՒ երեխաների կրթությանը, քանի որ հենց ընտանիքում էլ նախընտրել են, որ երեխաներից ավելի շատ հեռավար կրթությունից օգտվի նա, ով ԿԱՊԿՈՒ չէ։ Արվել են հետևյալ առաջարկությունները՝ խնդիրները լուծելու համար շատ լուրջ օրենսդրական կարգավորումներ են անհրաժեշտ, որոնք կբերեն հանրային գիտակցության բարձրացմանը և ներառականությունը չի դիտարկվի որպես թերություններով հանդերձ կրթության ձև, այլ կդիտարկվի որպես բոլորի կողմից կրթություն ստանալուհավասար իրավունք։ COVID-19-ի ընթացքում եղան բազմաթիվ խնդիրներ, որոնց միայն շատ քիչ մասն է ներկայացված այս զեկույցում։ Սակայն դրա համար ոչ ոք չկանչվեց պատասխանատվության և ոչ ոք չկրեց պատասխանատվություն, հետևաբար այդ խնդիրները կրկնվելու են և այս պահն էլ կրկնվում են՝ երեխաներիինենթարկելով խտրականության, թիրախավորելով նրանց ընտանիքներին։

Այսպիսով, որակական հարցազրույցներն ամփոփելով՝ գալիս ենք այն եզրակացության, որ բազմամասնագիտական թիմի մասնագետները՝ հոգեբան, լոգոպեդ, ուսուցչի օգնական, սոցիալական աշխատող, հատուկ մանկավարժ, ծնողներ, առարկայական մանկավարժներ, հեռավար կրթությունը համարում են անարդյունավետ, իսկ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքը գնահատում առավել բարդ գործընթաց՝ ընդգծելով, որ այդ երեխաները դուրս են մնում կրթությունից։ Բացի այն, որ դժվար է նրանց հետ դասապրոցեսում աշխատել, դժվար է նաև անհատական ֆորմատով աշխատել, իսկ որոշ դեպքերում, ինչպես ցույց տվեց փորձը, գրեթե անհնար է։ Բացի այդ, անկախ հեռավար կրթությունից՝ կարևորվեց նաև կարիքավոր երեխաների հետ աշխատանքում ծնողների ներգրավվածության բարձրացումը՝ խնդրի կարգավորման հարցում արդյունավետության հասնելու համար։

Եզրակացություն և առաջարկություններ

2021 թվականի հունիսից հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում հետազոտություն է կատարվել ԿԱՊԿՈՒ երեխաների շրջանում՝ պարզելու նպատակով, թե արդյոք նրանց կրթության իրավունքն իրացվել է COVID-19 սահմանափակումների ընթացքում: Ելնելով կատարված ուսումնասիրություններից՝ հանգել ենք այն եզրակացությանը, որ COVID-19 սահմանափակումների ժամանակ հեռավար եղանակով կազմակերպված կրթությունը գրեթե չի ունեցել արդյունավետություն, քանի որ համատարած անցնելով հեռավար եղանակով կրթության՝ չեն լուծվել երեխաների և մանկավարժների ռեսուրսային խնդիրները. այն երեխաները, որոնք ունեցել են հենաշարժողական կամ մոտորիկայի խնդիրներ, այդպես էլ խնդրային բարելավում չեն ունեցել, քանի որ ոչ մի տեսակ մասնագիտական միջամտություն չի եղել, դպրոցներում բախվել են կազմակերպչական խնդիրների, ոչ բոլոր ընտանիքներում են պատրաստ եղել աջակցել երեխային՝ տնից հեռավար կրթություն ստանալու համար: Եվ այս խնդիրների լուծմանն ուղղված համակարգված աշխատանքներ չեն իրականացվել:

Առաջարկություններ

1) Կրթական գործընթացը համակարգված կազմակերպելու անհրաժեշտություն, ընդ որում՝ շատ կարևոր է, որ պահպանվի կրթական համակարգի ճկունությունը ցանկացած արտակարգ իրավիճակի դեպքում և այդ նպատակով նոր մոտեցումներ և օրենքներ ներդրվեն ազգային քաղաքականության օրակարգ:
2) Միջգերատեսչական, միջոլորտային համագործակցություն տեղական և միջազգային հազմակերպությունների հետ՝ խոցելի խմբի խնդիրները բարելավելու նպատակով:
3) Գնահատող հանձնաժողով ստեղծելու և ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության իրավունքի իրացումն ստուգելու անհրաժեշտություն, որին համապատասխան կկազմակերպվեն հեռավար կրթությունից դուրս մնացած երեխաների բաց թողած ուսումնառության լրացումները:
4) Համընդհանուր մոտեցման հարթակի մշակում՝ ԱԻ պայմաններում հատուկ կարիքավոր երեխաների խնդրի հետ աշխատանքը կարգավորելու սկզբունքով:
5) Մանկավարժների շրջանում SS իմացության զարգացում:
6) Հաշմանդամություն ունեցող երեխաների համար տնային, հեռավար ուսուցման կազմակերպում՝ ապահովելով SS ռեսուրսների, ինտերնետ կապի, գրքերի և այլ ուսումնական նյութերի հասանելիությունը:
7) Հատուկ օժանդակ սարքերի կամ հատուկ կրթական ծրագրերի հասանելիություն, որոնք թույլ կտան տնային կրթության շարունակականությունը՝ հարմարեցված հատուկ կարիքներին:

Հավելված 1

Հարցաթերթ

1) Նշեք Ձեր երեխայի սեռը _____

2) Տարիքը _____

3) Բնակության վայրը _____

4) Երեխայի ֆունկցիոնալ գնահատականը_____

5) Տեղյա՞կ եք արդյոք ԱԻ-ի (Արտակարգ իրավիճակ) պայմաններում կրթության կազմակերպման եղանակներից։

   - ☐ Այո
   - ☐ Ոչ

6) Եթե այո, ապա Ձեր երեխան մասնակցություն ունեցե՞լ է հեռավար եղանակով անցկացվող դասերին։

   - ☐ Այո
   - ☐ Ոչ

7) Ո՞ր ժամին է աջակցություն տրամադրվել։

   - ☐ Դասերից առաջ
   - ☐ Դասերից հետո
   - ☐ Չի տրամադրվել
   - ☐ 1-ը և 2-ը միասին

8) Նշել աջակցության ժամը _____

9) Եթե երեխան չի մասնակցել, որո՞նք են չմասնակցելու պատճառները։_____

10) Համաձայնեցվե՞լ է արդյոք մասնագետի հետ աշխատանքի վերոնշյալ ժամաքանակը և տևողությունը Ձեզ հետ։

   - ☐ Այո
   - ☐ Ոչ

11) Եթե ոչ, նշեք Ձեր առարկությունները և պատճառները: _____

12) Ի՞նչ մասնագետներ են աշխատել Ձեր երեխայի հետ:

- ☐ Հոգեբան
- ☐ Հատուկ մանկավարժ
- ☐ Սոցմանկավարժ
- ☐ Սուրդոմանկավարժ (լսողական խնդիր ունեցողների հետ աշխատող մասնագետ)
- ☐ Տիֆլոմանկավարժ (տեսողական խնդիր ունեցողների հետ աշխատող մասնագետ)
- ☐ Լոգոպեդ
- ☐ Էրգոթերապևտ
- ☐ Ֆիզիոթերապևտ
- ☐ Ուսուցչի օգնական

13) Ի՞նչ աշխատանքներ են կատարել մասնագետները. կարո՞ղ եք նշել մի քանիսը:

- ☐ Երեխայի ֆունկցիոնալ կարողությունների և կրթական կարիքների գնահատում
- ☐ Երեխայի խնդրի կանխարգելման և շտկման աշխատանքներ
- ☐ Ծնողների համար խորհրդատվություն
- ☐ Խոսքի զարգացմանն ուղղված աշխատանքներ
- ☐ Հենաշարժողական ոլորտի զարգացման աշխատանքներ
- ☐ Մտավոր ոլորտի զարգացման աշխատանքներ
- ☐ Ինքնասպասարկման ոլորտի աշխատանքներ
- ☐ Դասապրոցեսից հետ մնացած բացի լրացում
- ☐ Նշեք Ձեր տարբերակը_____

14) Որքանո՞վ եք գոհ մասնագետների կատարած աշխատանքից, խնդրում եմ գնահատել 1-5 համակարգով:

- Հոգեբան 1 2 3 4 5

- Հատուկ մանկավարժ 1 2 3 4 5
- Սոցմանկավարժ 1 2 3 4 5
- Սուրդոմանկավարժ (լսողական խնդիր ունեցողների հետ աշխատող մասնագետ) 1 2 3 4 5
- Տիֆլոմանկավարժ (տեսողական խնդիր ունեցողների հետ աշխատող մասնագետ) 1 2 3 4 5
- Լոգոպեդ 1 2 3 4 5
- Էրգոթերապևտ 1 2 3 4 5
- Ֆիզիոթերապևտ 1 2 3 4 5
- Ուսուցչի օգնական 1 2 3 4 5

15) Եթե դժգոհ եք, խնդրում եմ նշել պատճառները։ _____

16) Ունե՞ք որևէ առաջարկ մասնագետներից մեկի աշխատանքը բարելավելու հետ կապված։

- ☐ Այո
- ☐ Ոչ

17) Եթե այո, մանրամասնեք_____

18) Ի՞նչ հաճախականությամբ է Ձեր երեխայի հետ աշխատել մասնագետը պարապմունքն իրականացնելիս։

- ☐ Շաբաթական 1-3 անգամ
- ☐ Շաբաթական 4-6 անգամ
- ☐ Ամեն օր
- ☐ Հազվադեպ
- ☐ Չի իրականացվել աջակցություն

19) Հեռավար ուսուցման ընթացքում ինչպիսի՞ խնդիրների եք բախվել Դուք և Ձեր երեխան։

- ☐ Դժվարություններ՝ կապված դասընկերների միջանձնային շփման հետ
- ☐ Խնդիրներ՝ կապված տեղեկատվության ընկալման հետ, անհատական առանձնահատկությունների հետ
- ☐ Խնդիրներ՝ կապված ուսումնական ժամանակի ծանրաբեռնվածության հետ

- Խնդիրներ՝ կապված մասնագետի աջակցության անցկացման ձևի և բովանդակության հետ
- Չենք առնչվել որևէ խնդրի
- Բացարձակ ոչ մի դրական տեղաշարժ չի եղել երեխայի ուսումնական գործընթացում
- Այլ——————————

20) Գո՞հ եք Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցման կենտրոնի կազմակերպած հեռավար աշխատանքներից: (հիմնավորել պատասխանը)

- Այո
- Ոչ
- Չի աշխատել երեխայի հետ

21) Գո՞հ եք դպրոցի կողմից կազմակերպված աշխատանքներից: (հիմնավորել պատասխանը)

- Այո
- Ոչ

22) Աշխատե՞լ եք Ձեր երեխայի հետ՝ ԱԻ պայմաններում խնդիրը չխորացնելու կամ բարելավելու համար:

- Այո
- Ոչ

Հավելված 2

Առանցքային տեղեկատուի հարցաթերթ

Բարև Ձեզ, իմ անունը...

Ներածություն

Շնորհակալ եմ, որ համաձայնվեցիք զրուցել ինձ հետ «Հայաստանում ներառական կրթության կազմակերպումը COVID-19 սահմանափակումների հետազոտության» շրջանակներում: «Ներառական կրթության կազմակերպումը COVID-19 սահմանափակումների հետազոտության» հարցազրույցի նպատակը Հայաստանի դպրոցներում տիրող ընդհանուր իրավիճակի գնահատումն է: Վստահելով Ձեր փորձառությանը՝ Ձեր կարծիքը շատ կարևոր է մեզ համար: Խիստ գաղտնիությունն առաջնային սկզբունք է մեր հարցազրույցում: Հարցազրույցը ձայնագրվում է, որպեսզի համոզված լինենք, որ որևէ կարևոր բան բաց չենք թողել: Ձայնագրությունը հասանելի կլինի միայն ինձ և իմ հետազոտող գործընկերներին:

Հենց որ հետազոտությունն ավարտվի, ձայնագրությունը կոչնչացվի: Որևէ անուն երբևէ չի նշվի:

Մասնագիտություն ——————————

1) Ձեր կարծիքով ՀՀ-ում արտակարգ իրավիճակի պայմաններում կրթության կազմակերպումը լիովին իրականացվե՞լ է:
2) Ձեր կարծիքով ինչպիսի՞ն է Արտակարգ իրավիճակի պայմաններում Հայաստանում դպրոցների ռեսուրսային ֆոնդը:
3) Ի՞նչ կարող եք ասել ներառական համակարգում սովորող ԿԱՊԿՈՒ երեխաների՝ ԱԻ պայմաններում կիրթության կազմակերպման մասին:
4) Ինչպե՞ս եք գնահատում Հայաստանում ԱԻ պայմաններում ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության կազմակերպումը:
5) Ինչպե՞ս եք աշխատել ԱԻ պայմաններում, ինչպիսի՞ մեթոդներով:
6) Ինչպիսի՞ խնդիրների եք բախվել ԱԻ պայմաններում ԿԱՊԿՈՒ երեխաների հետ տարվող աշխատանքներում: Խնդրում եմ նշել մի քանիսը:
7) Ինչպե՞ս եք լուծել առաջացած խնդիրները:
8) Հեռավար ուսուցման ընթացքում ծնողների հետ ինչպիսի՞ աշխատանքներ եք իրականացրել: Արդյունավե՞տ էին արդյոք դրանք:
9) ԱԻ ժամանակ կրթությունից դուրս մնացած երեխաների բաց թողնված դասերը լրացվե՞լ են, թե՞ ոչ, կնկարագրե՞ք՝ ինչպես:
10) Ձեր կարծիքով արդյոք ԱԻ պայմաններում ներառական կրթությանը վերաբերող օրենսդրական դաշտում լուրջ բացթողումներ կան: Ի՞նչը կարելի է բարելավել:
11) Ի՞նչ եք կարծում Հայաստանի դպրոցներում ծնող-ուսուցիչ հարաբերությունների մասին: Ինչպե՞ս կարելի է բարելավել այդ հարաբերությունները:
12) Ինչպիսի՞ առաջարկություններ կանեիք՝ ուղղված կրթության բարելավմանը:

Աբստրակտ

«Ներառական կրթության խնդիրները COVID-19 սահմանափակումների համատեքստում» հետազոտության նպատակն է պարզել, թե կրթությունից դուրս մնացած երեխաների կրթության իրավունքի իրացման վրա ինչպիսի ազդեցություն է ունեցել և ինչպես է կազմակերպվել արտակարգ դրության պայմաններում առցանց եղանակով ուսումնական գործընթացը։

Սույն զեկույցում ներկայացված է, թե ինչպիսի տեսական և գործնական աշխատանքներ են իրականացվել COVID-19 համավարակի սահմանափակումներին զուգընթաց և հետազոտության միջոցով բացահայտել այդ գործընթացի արդյունքում առաջ եկած պատճառահետևանքային կապերը։

Բանալի բառեր. ծնող, ներառական կրթություն, ԿԱՊԿՈՒ երեխաներ, հեռավար ուսուցում, COVID-19 համավարակ, կրթության իրավունք

Abstract

The purpose of the study "Problems of Inclusive Education in the Context of COVID-19 Restrictions" is to find out what impact it had on the realization of the right to education of children left out of education, and how to organize the educational process online in a state of emergency.

This report presents what theoretical and practical work has been carried out in parallel with the limitations of the COVID-19 pandemic and, through research, to identify the cause-and-effect relationships that have arisen as a result of this process.

Keywords: parent, inclusive education, SEN children, distance learning, COVID-19 pandemic, right to education